

ԻՐԱՆԻ-ԱՅՁԵՂԻՐ
(ՐԱՅԿԱԿԱՆ ՄԻ ՏԵՐԱՆԿԱՆ
ՊԱՏՄԱԼԵԶԿԱԲԱՆԱԿԱՆ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

Տեղանուններն արմատական կամ բաղադրյալ բառանվանումներ են, որոնք ծագում են աշխարհագրական դիրքի, հանքային հարստությունների, աղբյուրների, գետերի, լճերի, բնակչության զբաղմունքի, նշանավոր մարդկանց, տոհմանունների, սրբավայրերի ու կրոնական այլևայլ հավատալիքներ հատկանշող իմաստներից: Լեզվական կայուն միավոր պահպանվելու իրենց հատկությամբ տեղանուններն առանձնահատուկ նշանակություն ունեն լեզվաբանության, տեղանվանագիտության, պատմական աշխարհագրության և ժողովրդագրության համար: Միաժամանակ տարբեր գործոնների ազդեցությամբ տեղանունները դարերի ընթացքում ենթարկվում են հնչյունական ձևափոխությունների:

Պատմական Հայաստանի տեղանունների հիմքում պահպանված են հիմնականում բնիկ հայկական բառեր, որոնք, սակայն, շատ դեպքերում մեզ են հասել ոչ սկզբնական տեսքով: Անցնելով հին (գրաբարյան) և միջին հայերենների, ինչպես նաև բարբառային խոսվածքների բովով՝ Հայաստանի տեղանունները ենթարկվել են հնչյունական ձևափոխումների, շեղումների և աղավաղումների: Ամենից նկատելի են տեղանունների հնչյունական փոփոխություններն են. տեղանվանագետների բնորոշմամբ դրանք «անհամար են, համընդհանուր և անխնայ»¹:

Տեղանունների մեծ մասը մեզ է հասել տեղական (բարբառային)-արտասանական հնչյունական փոփոխված տարբերակ-

ներով: Հետևաբար այդպիսի տեղանունների նախնական ձևը վերականգնելու համար պետք է առաջին հերթին առանձնացնել նրանցում արտացոլված տեղական՝ տվյալ տարածագոտու բարբառային հնչյունական շերտերը:

Այս մտտեցման կիրառումով էլ ստորև վերականգնվում է *Իզդիր* տեղանվան նախնական վիճակը:

Իզդիր տեղանունն առաջին անգամ հիշատակվում է իսպանացի ճանապարհորդ Ռույ Գոնսալես դի Կլավիխոյի ուղեգրությունում (XV դար)՝ *Էզիդա* տարբերակով²: Բնականաբար ճանապարհորդը գրանցել է բնակավայրի՝ տեղացիներից լյաժ խոսակցական-հնչարտասանական անվանաձևը, որի հատկապես առաջին բաղադրիչն ակներևաբար հայերեն *այզի* բառն է³:

Իզդիր տեղանունը կազմված է *այզի* + *դիր* բաղադրիչներից: Այս բաղադրյալ կառուցվածք ունեցող տեղանվան բառակերպի *այ* երկբարբառը գրանցվել է մեծաբարբառացման (պարզեցման) պատմական զարգացումով՝ *այ* > է՝ *այզի* > *էզի*, հնչյունափոխական մի երևույթ, որն օրինակաբար է հայ բարբառներում:

Հայ լեզվաբանները քննել են հնչյունափոխական այս երևույթը՝ հաստատելով դրա առկայությունը XII-XIV դարերի վիճագիր արձանագրություններում և մատենագրական աղբյուրներում: Այսպես, Հ. Մուրադյանը նկատել է, որ *այզի* > *էզի* փոփոխությունը «միանգամայն օրինակաբար է

¹ В. А. Никонов. Введение в топонимику. М., 1965, с. 134.

² Տե՛ս Րույ Գոնսալես Դե Կլավիխո. Дневник путешествий Самарканд ко двору Тимура, 1403-1406. М., 1990, с. 72: Տե՛ս նաև Մ. Կ. Ջուլյայան, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների (XIII-XVIII դարեր), գիրք Ա, Քաղաքական պատմություն, Եր., 1999, էջ 20, 90:

³ Այս դեպքին չի վերաբերում այն տեսությունը, որ տեղանուններում հնչյունական փոփոխությունները հաճախ են կատարվում մի լեզվից մյուսին փոխանցվելիս: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս С. Б. Веселовский, Топонимика на службе у истории. "Исторические записки", т. 17, 1945, էջ 26:

այն բարբառների ու խոսվածքների համար, որտեղ *այ*-ով բառերը ենթարկվում են *այ>է* փոփոխության: Սակայն այդ նույն բարբառների մի մասում, այդ նույն *այգի* բառի դիմաց ունենք *իգի* (Մեղրի, Կարճևան և այլն), *իքի* (Արարատյան բարբառի որոշ խոսվածքներում), որոնք փաստորեն *էգի* ձևից զարգացած ձևեր են⁴: Այս նոր փոփոխությունը կարելի է բացատրել կամ ետին շարքի ձայնավորների՝ դեպի առաջին շարքն անցնելու ձգտման ընդհանուր միտումով (*ա>է>ի*), կամ պարզապես ետրմթաջ անմասնությամբ, երբ *էգի* բառաձևի մեջ բառասկզբի *է*-ն փոփոխվել է *ի*-ի բառավերջի ձայնավորի ազդեցությամբ (*էգի>իգի*):

Իգիիրը եղել է Երևանի մահաճգի Սուրմալու/Սուրբ Մարի՝ գավառի վարչական կենտրոնը: Ըստ Ա. Ղարիբյանի՝ «Արարատյան բարբառով խոսում են Արարատյան դաշտում, Վայոց ձորում, Նոր Բայազետի, Լոռու և Սպիտակի շրջաններում: Գրականությունից հայտնի է, որ Արարատյան բարբառով խոսում էին *Սուրմալվի* ու Կաղզվանի շրջանները»⁵: Հ. Աճառյանն Արարատյան (Երևանի) բարբառի մեջ է ընդգրկում նաև Սուրմալուի գյուղերը, բայց դուրս է թողնում Իգիիրը՝ պատճառաբանելով, որ այնտեղ է 1829-30 թթ. հաստատվել ժողով գաղթականությունը⁶: Սակայն, ինչպես նշվեց, Իգիիրը Էգիդա ձևով հայտնի էր տակավին XV դարում: Բոլոր հիմքերն ունենք եզրակացնելու, որ տեղանունն իր վրա սկզբում կրել է Արարատյան բարբառի, հետագայում չի բացառվում նաև Խոյի բարբառի ազդեցությունը, որովհետև Խոյի բարբառում գրաբարյան երկբարբառ-

ները նույնպես մենաբարբառացել են⁴:

Բերենք լրացուցիչ փաստարկներ: Ա. Ղարիբյանը նշում է, որ «Արարատյան բարբառը երկբարբառ չունի, գրաբարյան բոլոր երկբարբառների դիմաց այստեղ գրտնում ենք պարզ հնչյուններ»⁷: Արարատյան բարբառում մենաբարբառացումը առկա է և՛ բառասկզբում, և՛ բառամիջում, և՛ բառավերջում (երախայն < էրէխէն, քոյր < քիր, այգի < իքի, արիւն < արիւն, լոյս < լիս և այլն)⁸:

Նոր Հայկազյան բառարանում *այգի* բառհոդվածում նշվում է նաև *էգի*, *այգեպանի* դիմաց՝ *էգէպան*, *այգեստանի* դիմաց՝ *էգէստան*, *էգիներ*⁹:

Հ. Աճառյանը այգի համարում է բնիկ հայկական բառ. «խաղողի պարտեզ», «խաղողի որթ»... «հիմնական նշանակությունն է «որթ». ի դեմտվ իբր բուսական մասնիկ, արմատը կլիմի այգ «խաղող», որ հետո կորել է»¹⁰: Այնուհետև Հ. Աճառյանը տալիս է այգի բառի գավառական ձևերը. «Ակն. էգ՛ի «պարտեզ», Ազ. էգ՛ի ի. ըգ՛ ընա՛նի, ըգ՛ ընմ՛ գիք, Ապ. Նոր. Ռ. Տիգ. Տի. էք՛ի, Հն. էգ՛գ՛ի. Միդ. Սլմ. էքի՛, Ջթ. էգ՛ի, Մշ. յեգ՛ի. Ոզմ. հէ՛գէ, Տփ. իգի, Ջդ. իգ՛ի, Վն. իկի՛ի, Երև. իքի՛», նշում է նաև, որ հայերենից փոխառյալ պետք է համարել արաբերեն *ayk* «անտառ, ծառաստան» բառը¹¹:

Գ. Զահուկյանը հիմնավորում է, որ *այգի* բառը գործածական է եղել վաղնջահայերենում. «Կան նաև գիճուն և խաղողին վերաբերող *այգի* «խաղողի այգի», գիճի, որթ անվանումները. ...սրանք խոսում են խաղողագործությանը՝ վաղնջահայերին ծանոթ լինելու մասին»¹²: *Այգի* բառի *-ի* վերջածանցը, ըստ Գ. Զահուկյանի,

⁴ Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, Բ. 1, Եր., 1982, էջ 159:

⁵ 1765 թ Ա. Էջմիածնի «նուիրակութան վիճակները» նկարագրող վավերագիր Բ-ում հիշվում է Սուրմալի տարբերակով՝ «Մեծի աթոռոյս սրբոյ Էջմիածնի բնական առաջնորդական հասից գիդորայքն են այսոքի՛ ի յերկրոջս Երևան» շարքում (Մատենադարան, ձեռ. 9120, էջ 1ա-5բ), տե՛ս Ա. Այվազյան, Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Եր., 2003, էջ 250-251:

⁶ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Եր., 1953, էջ 219:

⁷ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, 1951:

⁸ Տե՛ս Մ. Ասատրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Եր., 1962, էջ 30-31:

⁹ Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 222:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Բ. Ա, Եր., 1979, էջ 79-80:

¹² Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ. 1, Եր., 1971, էջ 166:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային շրջան, Եր., 1987, էջ 263, 264:

«վաղնջահայերենում եղել է դեռևս գործում և արդյունավետ ածանց», որը գոյականներից ու բայերից կազմել է ածականներ կամ ածականացված գոյականներ¹⁵:

Այսպիսով, դարերի ընթացքում տեղանվան *այգի* բաղադրիչը ոչ միայն հնչյունափոխվել է՝ իր վրա կրելով բարբառային հնչարտասանական թանձրույթը, այլև եմթարկվելով արագաբանության օրենքին՝ աստիճանաբար դուրս է մղել *-ի* վերջածանցը՝ *Այգի+դիր>Այգեդիր>էգիդիր>Իգիդիր>Իգդիր//Իքդիր*:

Գ. Ջահուկյանի դիտարկմամբ, հայկական տեղանունների բաղադրյալ կազմությունների երկրորդ կամ վերջին մասը սովորաբար բնիկ հայկական բառ է, որը հանդես է գալիս կցումով կամ առանձին գործածությամբ՝ գերազանցապես ցույց տալով տեղանքի անվանումները¹⁶: Իգդիր տեղանունն իր կառուցվածքով միանգամայն համապատասխանում է անվանի լեզվաբանի առաջադրած այս կաղապարաձևին: Տեղանվան երկրորդ բաղադրիչը՝ *դիր*-ը, որը *դնել* բառի արմատից է, իր մեջ ամփոփում է տեղանշության իմաստ՝ *«այգիներ դնելու տեղ»*: Հ. Աճառյանը *դնել* (*«հիմնել-հաստատելու» իմաստով*) բառը համարում է բնիկ հայկական՝ տալով նրան «նոր և կարևոր մի նշանակություն», այն է՝ *«շինել, կառուցանել»*, նշում է նաև *դիրոր*¹⁷:

*«դիր ձևով հերկող մշակ»*¹⁷:

Ի մի բերե՞նք: Այգեդիր-Իգդիր նշանակում է *«այգիներ դնելու, մշակելու տեղ»*: Իսկ այն, որ Իգդիրը նշանավոր էր իր այգիներով՝ հանրահայտ և անվիճելի փաստ է:

Ավելացնենք, որ պատմական Հայաստանի տարածքում հիշատակված են նաև այլ տեղանուններ, որոնց բառասկզբի երկհնչյունները նույնպես պարզեցվել են. Իգահատ//Այգեհատ (Լոռի), Իքսոր// Այգեձոր, Իսասոր // Այծաձոր (Սպեր), Իգձոր//Այգեձոր (Խարբերդ), Էգեստան//Այգեստան (Վան), Էգեպար//Այգեպար (Էրզրում) և այլն:

Թուրքական աղբյուրներում *Իգդիր* տեղանունն էլ ավելի է հեռացել իր բուն ձևից՝ դառնալով Ըղդր (İğdir): Տեղանվանն ավելացել է Մավա (Mava)¹⁸ այսինքն՝ մեյվա (meyva) «միրգ» թուրքերեն հավելյալ բառը. այն թարգմանաբար նշանակում է Մրգի Իգդիր: Ընդհանրապես թուրքերը հայկական տեղանունները կա՛մ թարգմանում են, կա՛մ ավելացնում դրանց թուրքական որևէ բառ կամ բաղադրիչ: Երբեմն էլ, ուղղակի անունը ենթարկելով բարբառության, հեռացնում են իրենց բուն ձևից՝ հնչողությամբ մմանեցնելով թուրքերեն այս կամ այն բառին:

Լ. Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

¹⁵ Տե՛ս նույն տեղը:

¹⁶ Տե՛ս նույն տեղը:

¹⁷ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ. 1, էջ 675-675:

¹⁸ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», Բ. 2, Եր., 1988, էջ 507: